օրն իսկ խորհրդարանին մէջ կարդացուեցաւ։ Կրամոն ալ մօտալուտ պատերազմին պատճառաւ՝ Աւստրիոյ և Իտալիոյ ներկայացուցչաց հետ դաշնակցութեան մը բանագնացութիւնն սկսաւ։

Յուլիս 19ին՝ Պ. Լը Սուլտ 'ի Պերլին Պիզմարքի հաղորդեց պատերազմի հրատարակութիւնն. մնացածը ամենուն ծանօթ է։

ԼՈՆՏՐԱՅԻ ԳԼԽԱՒՈՐ ԹԵՐԹԵՐԸ

Ով որ «Printing House Square»է (Հրապարակ Տպագրութեան) կը մտնէ Times (Թայմզ) պաշտօնատունը՝ այն դռնէն որոյ վրայ կայ մեծ ժամացոյց մը, որ 'ի ձախակողմն անցելոյն բաց գիրքն, և յաջն ապագային գոց գիրքն ունի, մեծ սրահ մը կը գտնէ՝ որոյ մի միակ զարդն է լրագրոյն ամբողջական հաւաքումը, 1788 յունուարի առաջին թուէն սկսեալ։ Թայմզի առաջին թիւերը՝ իբր ծաւալ այսօրուանէն շատ տարբերութիւն ունին. իւրաքանչիւրը ութածալ չորս էջերէ կը ձևանայ, որ ձեռքով տպուած և կէսէն աւելի ծանուցումներ կը պարունակէ. արտաքին օր աւուր լուրերը միշտ հին են, գրեթէ շաբաթ մը. իսկ ներքինները՝ բաց 'ի թատերականացն և խորհրդարանին տեղեկագրոց՝ առհասարակ աննշան են։ Տասուերկու սանթիմ կ'արժէր թերթը, և գրեթէ հազարի չափ օրինակք կը տպագրուէին։ Բայց ընդ աճել նիւթական ծաւալի օրագրին՝ յայտնի կը տեսնուի նաև որ ճարտարագոյն ձեռք մը և գրիչ մ'ալ նիւթոց լաւագոյն բաժանում մը կը ներմուծէ։ Յարտաքին լրոց նորագոյն և ամենէն վերջինները միայն կը տեսնուին. այնպէս որ գաղղիական պատերազմաց ժամանակ՝ Թայմզ կառավարութեան սուրհանդակներն իսկ կ'անցնի, և միշտ անոնցմէ առաջ կը մատակարարէ իւր ընթերցողաց վերջին դէպք և արկածք։

Ուստի իրեն համար այլ ևս ուրիշ բան պակաս չէր մնար, բայց միայն արտաքին լրոց նման՝ հասարակաց կարծիքն ևս ըմբռնել արագութեամբ և տպագրել 'ի զարմանս նոյն իսկ ընթերցողաց. և ահա կամաց կամաց այն նախնի հատուկտոր բանք և գրոյցք՝ խմբագրական լուրջ և անաչառ յօդուածոց կերպարանք կ'առնուն. մինչև որ հուսկ յետոյ յիսուն տարի վերջը՝ այս խմբագրականք ըստ բանից Քարլէյլի կը սահմանուին «Ազդու և զօրաւոր ձայն Թայմզի»։

digitised by A.R.A.R.@

Այս օրագիրը յայտնի է թէ զանազան խմբագիրներ ունեցած է, տարբեր քաղաքականութիւն և շահեր պաշտպանած է, բայց իւր կերպն և ոճը բնաւ փոխած չէ. երբեմն երբեմն խմբագիր ունեցեր է դիւանագէտ և ըստ ամենայն մասանց կատարեալ լրագրապետներ, ինչպէս Պարնս և Տըլան, հմուտն Թովմաս Շէնըրի. և նոյն իսկ դեռ երեկեան պսակեալ ուսումնաւորներ՝ ինչպէս այժմեան խմբագրապետը. և բաց 'ի Շէնըրիի ժամանակէն՝ ցարդ Թայմզ իւր բռնած ուղղութիւնը բնաւ չէ փոխած։

Այսպիսի տարօրինակ և անընդհատ շարունակութիւն մը ի՞նչպէս կրնայ բացատրուիլ. մասամբ կրնանք մեկնել այս հաղուադիւտ դէպքը՝ նկատել տալով մեր ընթերցողաց՝ որ Թայմզի պատմութիւնը կրնայ ամբողջ գերդաստանի մը պատմութիւնն համարուիլ. այս տեսակէտով որ նորա խմբագիրք յորդւոց որդի առանց մնանաւոր ուսումնական և գրական հռչակ մ'ալ ունենալու՝ օրագիր մը լաւ և կարգաւորեալ կերպով հրատարակելու գաղտնիքն և ճարտարութիւնն ունէին. Վոդըր (Walter) անուամբ անձ մը զայն հաստատեց. երկրորդ Վոդըրի մը ժամանակ՝ Թայմզ աշխարհիս ամէն լրագիրները գերազանցեց. երրորդի մը ատեն՝ հարստութեան և ազդեցութեան գագաթնակէտն հասաւ. իսկ այժմ չորրորդ մը զայն կը շարունակէ. ամէն խմբագիրք ալ սակայն ջա՜նք ունեցեր են աշխատակից առնլու գերազանց հանճարներ և նշանաւոր գրիչներ։

Թայմզ ցարդ Անգղիոյ վարչական մարմնոյն գաղափարաց հաւատարիմ ներկայացուցիչն է. իւր յօդուածները կարդացողը կը տեսնէ որ սոքա ոչ եթէ սոսկ մենակեաց լրագրապետի մը գաղափարներն են, այլ և այնպիսի անձանց՝ որ իրենց կամ քաղաքական և կամ տնտեսական դիրքով՝ անգղիական ընկերութեան ուժը կը կազմեն։

Այժմ քանի մը խօսք ալ նուիրենք այս մեծ գործիչին բովանդակ մէկ դարու չափ ընթացքի մէջ կատարած աշխատութեանց և կատարելագործութեանց։

Թայմզ այժմ 400է աւելի անձինք կը զբաղեցընէ ընդ գործաւոր և ընդ պաշտօնեայս. բաց յինչ ինչ մասնական գործեաց և յինն շոգեշարժ մամլոց, ամենայն ինչ պաշտօնատան մէջ կը կատարուի. նոյն իսկ գիրերը, կաղապարները և հաշուետետրները. ընդարձակ շէնքին մէջ պատահած դիպուածական և աննշան նորոգութիւններն ալ իրենք կը կատարեն. շէնքին մէջ ընդարձակ ճաշարան մը կայ, ուր գործաւորք օրուան և գիշերուան ամէն ժամերը կրնան ճաշել և ընթրել շատ

digitised by A.R.A.R.@

չափաւոր վճարքով։ Իսկ Թայմզի գործաւորք՝ ամենեին յարաբերութիւն չունին Լոնտրայի գրաշարաց ընկերութեան հետ. և շաբաթական՝ թերթ և ամենաոչինչ վճարով կամ տուրքով մը՝ կ'ապահովցընեն իրենց համար ինամք 'ի հիւանդութեան, և թոչակ կամ ռոճիկ մը 'ի ծերութեան կամ յանկարողութեան։ Մի անգամ տարին Թայմզի ամէն գործաւորաց և թոչակաւորաց ճաշ կուտայ տէրը իւր տանը մէջ. մինչ պաշտօնեայք՝ ըստէպ այցելութեան կ'երթան իւր ամարանոցը։

Ի Լոնտրա այս մեծագործ շէնքին ամբողջութիւնն և գեղեցկութիւնն՝ նորա պարզութեան մէջ է։ Քաղաքին ամենէն բանուկ և կեդրոնական մի փողոցի վրայ կը գտնուի խմբագրութեան, տիրոջ, ծանուցմանց և վարչութեան պաշտօնատունք. իսկ սոցա կից՝ գրաշարաց սրահներն։ Այս սրահներուն ըստորին յարկին մէջ մամուլներն և մեքենաները կան. դեռ աւելի խոր՝ ձուլարանը, մեքենայից գործատունը և էլեկտրական գործիները։

Շէնքիս ամենէն աւելի հետաքրքրական մասը՝ գրաշարաց սրահն է. որ իւր տեսակին մէջ՝ կրնայ երբ օրինակ ծառայել ընդարձակութեան, օդափոխութեան՝ և լուսաւորութեան. բայց ամենէն աւելի նշանաւորն՝ կարգ մը շարող գործիքներն են, որ այժմ յոյժ կատարելագործեալ են։ Այս գործեաց երագութեան չափն է՝ Թայմզի մի սիւնակ և քառորդ առ մէն մի ժամ, mignon կոչուած գրերով, որ պաշտօնատան մէջ գործածուած եւրեք տեսակէն ամենէն աւելի փոքրն է։ Ուստի գրաշար մը օգնական երկու տղաքներով՝ տասնամեակ և տասներեք սովորական գրաշարներու գործը կը տեսնէ։ Մեքենայս ստեղնարան մ'ունի. և երբ երեսփոխանաց խորհրդարանին նիստը կ'երկարին երբեմն մինչև գիշեր՝ գրաշարը գործիքին առջև կը նստի, և ամենայն ուշադրութեամբ ականջին կը մերձեցընէ հեռախօս գործոյն մի ծայրը, մինչդեռ միւս ծայրէն լրագրին թղթակիցը կամ բանբերը՝ շարունակ կը կրկնէ համառօտ կերպով վիճաբանութիւններն, և երբեմն նշանաւոր խօսակցութիւնք՝ նոյն իսկ բառ առ բառ։

Գրաշարաց սրահին հետ միացած է նաև սրբագրանոցը. ուր քառասունի չափ հասակաւոր և երիտասարդ անձինք՝ աչքէ կ'անցունեն առաջին ձեռք տպուածները. յետոյ սրբագրեալ մամուլքն իրարու հետ կը միացընեն, մինչև վեց սիւնակ, որ ամբողջ երես մը կը ձևացընեն. և զանոնք այնպէս ամուր և հաստատուն կը կապեն՝ որ երբ անգամ մը դիպուածով այսպէս շարուած ամբողջ երես մը սահելով մեկ յարկէ մը վար գլորե-

digitised by A.R.A.R.@

ցաւ՝ այնչափ հազարաւոր դիրերէն՝ միայն մի քանին խախտեր էին։ Յետոյ այս շարուած և պատրաստ էջերը՝ կը հաստատա-տպին սովորական ոճով. միայն թէ իւրաքանչիւր էջի համար վեց վեց գլան կը պատրաստեն, որպէս զի վեցն ալ մի և նոյն ժամանակ տպագրուին, մնանաւոր մեքենաներով, որ տիրոջ անուամբ Վոդբը (walter) կը կոչուին. Թայմզի մէկ թուին տպագրութեան համար գործածուած թուղթը՝ մի մէտը լայնութիւն իսկ 500 մղոն երկայնութիւն ունի։ Ցպագրատան տեսուչն է Կոֆրէտ Վոդբը՝ տիրոջը ամենէն երիտասարդ որդին։

Այսպիսի մեծ թերթի մը ոչ եթէ միայն արտաքինը՝ այլ և ներքին կարգադրութիւնը զարմանալի է. ամենօրեայ տասցած լրոց անհաւատալի թիւը, լրագրին մէջ սոցա նուիրեալ ընդարձակ սիւնակները, վերջապէս զատնք տպելու և հրատարա՝ելու համար հարկ եղած այն քանի մը կարճ ժամերը՝ ամենամեծ ուշադրութեան և կարգադրութեան պէտք ունին. ապա թէ ոչ աննկարագրելի խառնակութիւն մը կը ծագի։ Քանի մը տարի առաջ հանդիպած ինչ ինչ փոքրիկ անճշդութեանց համար՝ իւրաքանչիւր դործաւորի և պաշտօնէի վրայ պատասխանատուութեան պարտք մը դրուեցաւ։ Օրինակի համար. հեռադիր կամ նորալուր մը երբ հասնի՝ ի պաշտօնարանն խմբագրութեան՝ անդ իսկոյն կը նշանակուի ճշդիւ հասած ժամն և վայրկեանը. անկից երկրորդ պաշտօնէին ձեռքը կը յանձնուի, ըստ բաժանման դիւանագիտական, տնտեսական և այլն մասանց. ատ ևս կը նշանուի թէ քանի՝ վայրկեան պաշտօնէին ձեռքը մնաց յիշեալ հեռադիրը. կ՝արձանագրեն յետոյ զայն շարող գործաւորին անունն և անցուցած ժամանակն. նոյն բանը սրբագրողին համար ալ կը կրկնեն։ Վերջապէս սիւնակաց և էջերու ձեւացումը, հաստատասպութեան գործողութիւնք, ՝ի մեքենայ երթալն, օրինակաց յանձնումն, ամենայն ինչ խստիւ նշանակուած է անուամբ և ժամանակաւ և այլ մանրամասն պարագայիւք, ոչ եթէ վայրկեան առ վայրկեան, այլ երկվայրկեանքն իսկ։

Այս դրութեան արդիւնք է Թայմզի գրեթէ անսխալ շարադրութիւնն և տպագրութիւնը։ Անդամ մը լորտ Վինչէլսը (Winchielsea) 2500 ֆռ. խոստացաւ տալ այն անձին որ կարենար 30 տպագրութեան սխալ գտնել Թայմզի մէկ թերթին մէջ. և եթէ այս որոշեալ թիւէն աւելի գտնէր՝ իւրաքանչիւր սխալի համար 250 ֆռ։ Բայց յետ աշխատելոյ և ուշադիր քննութեան մը՝ միայն երեք հատ կէս սխալ կրցան գտնել։ Եւ բնական է այս. վասն զի վերոյիշեալ դրութեամբ, ամենաթեթև սխալի մը համար իսկ, օրինակի համար դարձած գրի մը հա-

digitised by · A.R.A.R.@

մար, դայն չարողը մեծապէս կը տուժէ՝ և եթէ կրկնէ՝ տպագրատունէն կ'արձակուի իբր անկարող կամ անուշադիր։ Արտաքին լուրերը առանձին պաշտօնատուն և խմբագրութիւն ունին. իսկ խորհրդարանին տեղեկագրոց համար՝ միշտ տասն և վեց սղագիր դպիրներ կ'աշխատին, որ քառորդ մէյմը կը փոխուին։

Անգղիոյ և բովանդակ աշխարհիս մեծամեծ լրագրաց միոյն վրայ խօսած ժամանակնիս՝ չենք կրնար զանց ընել և չյիշատակել իւր թղթակցաց առաջինն և գլխաւորը, զՊ. Պլովից. մանը այս լիազօր ներկայացուցիչն 'ի Բարիզ կը բնակի. և յիրաւի դիւանագիտի կամ դեսպանի արժանաւոր թոշակ մ'ալ կը վայելէ. տարեկան 50,000 ֆռ. բաց 'ի 25,095 ֆռ. ծախքերէն և առանձնական կառքէն։ Չափազանց վճարք մ'ալ չէ սա, եթէ մտածենք որ քանի տարիներու ընթացքին մէջ՝ անընդհատ լեցուցեր է Թայմզի սիւնակները, եւրոպական գործոց և նշանաւոր անձանց վրայ գրած արդարախոհ, եռանդուն, կախարդիչ և շլացուցիչ յօդուածներով։ Միւս մայրաքաղաքաց մէջ ալ նշանաւոր թղթակիցներ ունի Թայմզ. Պ. Լուվ 'ի Պերլին, Պ. Լաւինո 'ի Վիեննա, և Պ. Ստիլման 'ի Հռոմ։

Չենք կրնար ըսել թէ Թայմզ ցարդ պահած է իւր առաջին ազդեցութիւնն և բարձր դիրքն անգղիական լրագրաց մէջ. բայց հաւասարապէս դարձեալ է նա միշտ առաջին 'ի մէջ հաւասարից (primus inter pares). հնուտ և մշակեալ լրագրութեան մասին՝ սա է միայն ներկայացուցիչ. գրականութեան, արուեստից և գիտութեան նորանոր զարգացմանց և յառաջադիմութեան կը նուիրէ հմտալից յօդուածներ. իւր արտաքին թղթակցութեան կարգադրութիւնն և առատութիւնն՝ ոչ մի լրագիր ունի, արտաքին արքունեաց և դիւանագիտական և քաղաքական ակմբոց վրայ ունեցած ազդեցութիւնն՝ յոյժ մեծ է և օր ըստ օրէ կ'աւելնայ։ Անգղիացի ճանապարհորդն զԹայմզ աշխարհիս ամէն անկիւնն ալ կը գտնէ. գրեթէ ամէն պանդոկ և իջեւան կ'ընդունի օրինակ մը։ Ուրիշ լրագիրք թերևս լաւագոյն և յաջողագոյն կերպով և ոճով բացատրեն և ներկայացընեն ընթերցողաց իրաց արդի կացութիւնը. բայց Թայմզ միշտ եղած է և պիտի ըլլայ անգղիական ազգին մեծութեան, քաղաքակրթութեան, հաստատամտութեան և յարատեւութեան ներկայացուցիչը։

Տէյլի Նիուզը (Daily News) քառասուն և հինգ տարիներէ 'ի վեր՝ անգղիական չափաւոր ազատամիտ մասին կարծիքը յարատեւութեամբ կը ներկայացընէ. արմտեաց օրինաց բարձման տարին հաստատուած՝ իւր ընթացքին մէջ շատ անգամ և շատ

digitised by . A.R.A.R.@

դիպուածոց մէջ մեծամեծ յեղափոխութիւնքն նախագուշակեց. ինչպէս Իտալիոյ միութիւնն, դերեաց ազատութիւնն Յունաստանի, Ամերիկա, այժմեան ազատամտութեան յաղթանակն 'ի քաղաքակա-նութեան, և վերջին անն՝ այլ ոչ և չնչին ազատութիւնն Պուլ-կարիոյ. և այս խնդրոց մէջ այնպիսի լեզու և ոճ մը բռնեց՝ որ Յիտալիա, 'ի Յունաստան, 'ի Գաղղիա, 'ի Ռուսիա և վերջապէս Եւրոպիոյ ամէն ազատամիտ ակմբոց մէջ միշտ Թայմզի հաւա-սար գնահատուեցաւ։ Այս միշտ ազատ վաճառականութեան, խորհրդարանին բարենորոգման, և կրօնական ազատութեան դրօշը պարզած է։

Առ արտաքինս՝ միշտ ջերմ պաշտպան հանդիսացած է ազ-գութեան սկզբանց, իսկ առ ներքինս՝ ռամկապետութեան. ուս-տի Տէյլի Նիոսի դիւցազն է Պ. Կլէտսդոն։

Երբ Տէյլի Թէլէկրաֆ (Daily Telegraph) մասնաւոր քաղա-քական կողմնակցութեան մը գծէն չեղեցաւ՝ առաւօտեան մե-ծամեծ լրագրաց մէջ միայն իւր ձայնն առանձին մնաց։ Այլ լրագրիս տեարք երեք են. բազումք յայսորդեցին յուղղութիւն թերթիս, յորս և Տիքէնս, հուչակեալ ոչ եթէ իւր լրագրական հարտար քաղաքագիտութեան համար, այլ նկարագրական և քաղաքական խառն յօդուածոց համար, որոց տպագրեալ առա-ջին փորձերը կամ սիւնակները կը մատուցանէին իրեն արա-ծաթեայ ակտեղը, և տարեկան 52,000 ֆր. թոշակ մը կ'ընդու-նէր. սակայն այս բանս շատ երկար չտեւեց։ Այժմեան խմբ-բագրապետը, Ռոպինսըն, որ մնտեսական մասն ալ կը հոգայ՝ մեծ օգնութիւն բերած է այս թերթիս, և զայն բազմաթիւ վը-տանգներէ և արկածներէ ազատելէն վերջը՝ այժմեան ծաղկեալ դիրքին հասուցեր է։ Երբ բովանդակ Եւրոպա յուզեալ էր 48ի յեղափոխութեամբ, և 'ի Լոնտրա Մածծինի առաջկայ և կեդ-րոն էր յարգախառն սիրոյ և համակրանաց իւր պատկառելի անձնաւորութեամբ՝ երիտասարդն Ռոպինսըն իւր եռանդնալից յօդուածոց միոյն մէջ նշանաւոր իտալացւոյն մի բանախօսու-թիւնն արտատպեց. այս առթիւ ծանօթացաւ Նորա հետ, ու միշտ իւր մտերիմ բարեկամն եղաւ և յաճախորդ այցելու Տէյլի Թէլէկրաֆի տպագրատան։ Թերթիս գլխաւոր խմբագրաց և թղթակցաց մէջ պէտք է յիշատակել ղԱրջիպալտ Ֆորպէս, որ պատերազմի գաշտաց վրայ՝ ամենէն աւելի ճարտար և յանդու-գէն թղթակիցն է. Քէլէյտրն՝ քաղաքական խնդրոց վրայ կը գը-բէ. Լանկ՝ գրադատական. տիկին Գրաուֆորտ իր ամուսնոյն յա-ջորդեց իբր թղթակից Բարիզու։

Մեքենայք և օրագրին խմբագրութեան համար հարկաւոր

digitised by A.R.A.R.@

ամենայն ինչ կատարելութեան վերջին ծայր հասած են. տպագրատունն՝ նորակառոյց ահագին շինուածք մ'է։

Սդէնտէրտը թերևս այժմեան անգղիական լրագրաց մէջ ամենէն աւելի հաստատուն է. և կրնանք ըսել թէ Լոնտրայի առաւօտեան արժանագին թերթոց պարագլուխն. և իւր արտաքին վայելուչ տեսքը, ալնիւ թուղթը և անսխալ շարադրութիւնը՝ իւր ուղղութեան լաւութիւնն և կարգադրութիւնը կը ցուցընեն։ Գործի տէր մարդկանց նախամեծար թերթն է սա, թէպէտ իւր տնտեսական և գրական կարծիքը շատ գնահատեալ չեն 'ի Սակարանն։ Ցաջող և մեծ նախանձորդ մ'ալ ունի (Մորնինկ–փոսդ) որ շատ աւելի գիւրութեամբ կը տարածուի քաղաքին մեծամեծ ակմրոց մէջ։ Սդէնտէրտ և Մորնինկ փոսդ՝ պահպանողական կուսակցութեան ամենէն նշանաւոր գործիչներն են. յետինս՝ աւելի հին պահպանողականաց կողմն է, որ ցարդ ևս բաւական զօրաւոր կուսակցութիւն մը կը կազմէ. Սդէնտէրտ ալ իւր բաժնին մէջ անգղիական ազգային կենաց հաւատարիմ ներկայացուցիչն է, 1827ին հիմնուած. զանազան վիճակներէ անցնելէ և տիրոջը անանկութենէն վերջը՝ 1857ին Պ. Ճոնսթրն գնեց զայն ուրիշ նմանօրինակ ուղղութեան ունեցող թերթի մը հետ (Մորնինկ Հէրալտ)։ Պ Ճոնսթրն գործունեայ անձ մ'ըլլալով՝ երկու թերթերն ալ միացուց. Սդէնտէրտը առաւօտեան լրագիր ըրաւ, գինն իջեցուց և ծաւալը կրկնապատկեց. Հնդկաստանի հաչակաւոր ապստամբութեան ժամանակն էր։ Պ. Ճոնսթրն 1878ին վախճանեցաւ. բայց մեռնելէն առաջ յուղղութիւն իւր թերթին արժանաւոր անձ մը գտեր էր, զՊ. Մրտֆորտ. իւր տուած ուղղութեան շնորհիւ՝ կրնայ և կը մրցի միւս առաւօտեան մեծամեծ լրագրաց հետ։ Սդէնտէրտի ճարտարագոյն և յաջողագոյն աշխատակցաց մին է նշանաւոր բանաստեղծն և քաղաքագէտն Ալֆրետ Օսդէն։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ազդեցութիւնը կենդանեաց վրայ։ — Թէ՝ ձիերն և թէ շուները՝ երաժշտական լաւ ականջ ունին. մանաւանդ եղած են շուներ, որ տխուր և զգայուն անցքերու՝ ողբական ձայներ կը հանէին, իսկ զուարթ կատորներ լսած ժամանակ՝ ուրախութեամբ կը հաչէին և զարնոդին ձեռքը կ'երթային լզելու՝ կարծես նոյն անցքին կրկնութիւնը թախանձ-

digitised by A.R.A.R.@